ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.07.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/97

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.06.2019թ. թիվ /26/10287-2019 գրությամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 11.06.2019թ. թիվ 01/10-109 գրության հիման վրա, 19.06.2019թ. թիվ /26/10287-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Ջի Թի Սի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/97 ընթացակարգի շրջանակներում 27.06.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.06.2019թ. թիվ 01/10-109 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուն 07.06.2019թ. միակողմանի լուծել է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի միջև 28.02.2019թ. կնքված «ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/2-9» ծածկագրով պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր), քանի որ Ընկերությունն էականորեն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտականությունը:

Նույն գրությամբ Պավիրատուն հայտնել է, որ Պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվել է 11.06.2019թ.

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/97 ընթացակարգի շրջանակներում 27.06.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/97 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/97 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի միջև 27.02.2019թ. կնքվել է «ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/2-9» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է

Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

1.«Ջի Թի Սի» ՍՊԸ-ին ուղղված 07.06.2019թ. թիվ 01/10-105 գրությամբ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է, որ միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.06.2019թ. թիվ /26/10287-2019 գրությունը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 11.06.2019թ. թիվ 01/10-109 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի միջև 27.02.2019թ. կնքվել է «ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/2-9» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է ի թիվս այլ ապրանքների Պատվիրատուին մատակարարել 60 000 մետր թանզիվ, ընդ որում՝ նախատեսվել է, որ ապրանքի մատակարարումը վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսնական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում, **յուրաքանչյուր անգամ գնորդից ապրանքի մատակարարման պատվերը ստանալու պահից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գնորդի կողմից պատվիրված ապրանքի քանակին համապատասխան, ընդ որում առաջին փուլի պատվերի մատակարարման ժամկետը 20 օր է: Ապրանքի**

մատակարարման համար պատվերը գնորդի կողմից վաճառողին կատարվում է բանավոր կամ գրավոր:

Կողմերի միջև 27.02.2019թ. կնքվել է Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետով հաստատվել է վճարման ժամանակացույցը:

Պատվիրատուն 03.04.2019թ. Ընկերությանը էլեկտրոնային եղանակով ներկայացրել է Պայմանագրով նախատեսված ապրանքների, այդ թվում՝ 24 000 մետր թանզիվի մատակարարման պատվեր:

22.04.2019թ. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվել է Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ թիվ 1 բացասական եզրակացությունը, համաձայն որի՝ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից մատակարարման ենթակա 24 000 մետր թանզիվից 15.04.2019թ. փաստացի մատակարարվել է 12 000 մետր թանզիվ: Նույն եզրակացության համաձայն՝ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն մատակարարել է 25 գր/մք խտությամբ թանզիվ, մինչդեռ Պայմանագրով նախատեսվել է, որ թանզիվի խտությունը պետք է լինի ոչ պակաս քան 32 գր/մք:

Պատվիրատուն 22.04.2019թ. էլեկտրոնային եղանակով Ընկերությանը տրամադրել է պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված թիվ 1 եզրակացությունը և առաջարկել ծանուցումը ստանալու պահից հաշված 5 օրացույցային օրվա ընթացքում 15.04.2019թ. մատակարարված ոչ պատշաճ որակի ապրանքը փոխարինել և Պատվիրատուին մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանք:

Ընկերությանն ուղղված 07.06.2019թ. թիվ 01/10-105 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերությունը 03.05.2019թ. դրությամբ գնորդին մատակարարել է միայն 12 000 մետր թանզիվ, որը Պատվիրատուի կողմից չի ընդունվել, քանի որ այն չէր համապատասխանում Պայմանագրով սահմանված և մատակարարման ենթակա թանզիվի որակին: Մատակարարված անպատշաճ որակի թանզիվը փոխարինելու համար գնորդը 22.04.2019թ. սահմանել է 5 օր ժամկետ, որի ընթացքում վաճառողը հնարավորություն ուներ փոխարինելու այն Պայմանագրով սահմանված որակի թանզիվով: Սակայն վաճառողն այդ 5 օրացույցային օրվա ընթացքում փոխարինել և գնորդին մատակարարել է ընդամենը 4 000 մետր թանզիվ:

Այսպիսով՝ 03.04.2019թ. տրված պատվերից վաճառողը գնորդին 03.05.2019թ. դրությամբ չի մատակարարել 12 000 մետր թանզիվ, բացի դրանից մատակարարված

անպատշաճ որակի 8 000 մետր թանզիվը գնորդի կողմից սահմանված ժամկետում չի փոխարինվել:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը, միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը 12 000 մետր թանզիվի մասով:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 2.1.7.1. ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ ***վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:***

Այսպիսով՝ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն ստանձնել է վերջինիս և «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 27.02.2019թ. կնքված «ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/2-9» ծածկագրով պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Պատվիրատուին համապատասխան քանակի ապրանք մատակարարելու պարտականությունը: Ուսումնասիրելով գործում առկա նյութերը՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, քանի որ Ընկերությունը Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և Պատվիրատուի պատվերին համապատասխան սահմանված ժամկետներում Պատվիրատուին չի մատակարարել Պայմանագրով նախատեսված «Թանզիվ» ապրանքի ողջ խմբաքանակը:

Գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.06.2019թ. թիվ /26/10287-2019 գրությամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**